**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**հրավերում փոփոխություններ կատարելու մասին**

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2025 թվականի մարտի 04-ի թիվ 2 արձանագրությամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը՝ **ԵՄ-ԷԱՃԱՊՁԲ-25/24**

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կարիքների համար հերթապահի կրպակի ձեռքբերման նպատակով կազմակերպված ԵՄ-ԷԱՃԱՊՁԲ-25/24 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերում կատարված փոփոխության պատճառները և կատարված փոփոխությունների համառոտ նկարագրությունը՝

**Փոփոխության առաջացման պատճառ N 1:** Էլեկտրոնային աճուրդի համակարգի միջոցով գեներացված հրավերի տեքստով ներկայացված տեխնիկական բնութագրում անհրաժեշտություն է առաջացել փոփոխություն կատարելու:

**Փոփոխության նկարագրություն:** Տեխնիկական բնութագիրը շարադրվել է նոր խմբագրությամբ, հետևյալ կերպ՝ «Շարժասանդուղքի հերթապահի մետաղապլաստե կրպակ: Մետաղապլաստե պրոֆիլը՝ ոչ պակաս 3 կամ 4 խցիկ, մետաղապլաստի չափերը 50x61x70 մմ, գույնը՝ սպիտակ: Կրպակի ուղղահայաց պրոֆիլները անկյունային մասերում միմյանց միանում են դրանց համար նախատեսված շրջանաձև խողովակներով, խողովակի մետաղական ներդիրի հաստությունը 2մմ:Կրպակի արտաքին չափերը՝ լայնությունը 1500մմ, երկարությունը 1500 մմ, բարձրությունը 2300 մմ: Կրպակի մետաղապլաստե եվրո դռան չափերը 850x2150 մմ: Դուռը 4 ծխնիով,շարժական բռնակով, բանալիով փակվող, մինչև 1 մետրը լամինատից, մնացածը ապակե 4 մմ անգույն փաթեթից : Առաստաղը՝ 18մմ հաստության սպիտակ լամինատից, որը մոնտաժվում է 2150 մմ բարձրության վրա: Հատակը պատրաստվում է կրպակից առանձին, մետաղական 20x40մմ ուղղանկյուն խողովակներից, բարձրության՝ 150 մմ: Կրպակի մեջ մետաղական կարկասի տեղադրումից հետո կարակսի վրա մոնտաժվում է ԴՍՊ, այնուհետև լամինատ: Կրպակի կողպատերը ներքևի պրոֆիլից մինչև 1000 մմ բարձրության պրոֆիլը և առաստաղից վերև 150 մմ բարձրությունը պատրսատված 18 մմ հաստության սպիտակ լամինատից, մնացածը ապակե 4մմ անգույն փաթեթից: Կրպակի ներսի կողմից կողպատին պետք է մոնտաժվի սպիտակ լամինատից սեղան, չափերը 1380x350x850 մմ, երկու բացվող դարակով՝չափերը 65x30x23 և 65x30x58սմ, երկուսնել բանալիով փակվող:»:

**Փոփոխության հիմնավորում:** «Գնումների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Լ. Հայրապետյանին:

Հեռախոս՝ +37498389689 (ներքին հեռախոսահամար՝ 11)
Էլ. փոստ՝ l.hayrapetyan@promotion.am
Պատվիրատու՝ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ